Արձանագրություն N 2

«ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2026-07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«23» փետրվարի 2026 թ. ժամը 15:30-ին
«24» փետրվարի 2026 թ. ժամը 12:30-ին

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի.
Նախագահ՝ Ա. Ղազացյան
Անդամներ՝ Ն. Ալեքսանյան, Ն. Հախվերդյան
Քարտուղար՝ Ա. Վիրաբյան
Բացակայում է.

Օրակարգ.

**«ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2026-07» ծածկագրով գնման ընթացակարգի բացման նիստի անցկացում և արդյունքների հաստատում**

**Ընդունել ի գիտություն, որ՝**

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել և հիմնավորումներ չեն ներկայացվել:

1. **«ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2026-07» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի ներկայացման վերաբերյալ.**
   քարտուղարի կողմից 15:30-ին հայտերի գրանցամատյանը փակելուց հետո, նախագահը հրապարակել է նախահաշվային գները:
2. **Գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.**

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը |
|---|---|---|
| 1. | «Էկոլոգիա Վ. Կ. Հ.» ՍՊԸ | ՀՀ, Արմավիրի մ., ք. Վաղարշապատ, Մարգարայի խճ., 4/1, հեռ. 077-66-90-80, e-mail: ekovkh@gmail.com |

3. **Տվյալներ ծրարը կազմելու, ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին և բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**
   մասնակից ընկերության կողմից ներկայացված ծրարը կազմված է «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2026-07» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:
   Փակ կնքված ծրարով «Էկոլոգիա Վ. Կ. Հ.» ՍՊԸ ընկերությունը ներկայացրել է.
   - դիմում-հայտարարություն գնանշման հարցման մասնակցելու,
   - գնային առաջարկ:

Վերոնշյալ կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 1 օրինակ պատճենից, փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

4. **Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի սահմանված պահանջներին համապատասխան կազմած լինելու մասին.**
   Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2026-07» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

5. **Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ /ՀՀ դրամ/.**
   Ընթացակարգի հրավերով սահմանված կարգին բավարարող մասնակիցների գնային առաջարկները.

| չ/հ | Ծառայության անվանումը | չ/մ | Նախահաշ վային գինը (ՀՀ դրամ) | Քանակ | «Էկոլոգիա Վ. Կ. Հ.» ՍՊԸ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Մասնակցի գնային առաջարկը առանց ԱԱՀ (ՀՀ դրամ) | Մասնակցի գնային առաջարկը ԱԱՀ-ն ներառյալ (ՀՀ դրամ) |
| 1 | Վտանգավոր թափոնների ոչնչացում | դրամ | 3,300,000 | 1 | 2,750,000 | 3,300,000 |

6. **Գնահատման արդյունքների վերաբերյալ.**

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման արդյունքները ներկայացվել են գնահատման թերթիկում:

Որոշում.

1. Ընտրված մասնակից ճանաչել «Էկոլոգիա Վ. Կ. Հ.» ՍՊԸ ընկերությանը:
2. Համաձայն «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի, անգործության ժամկետ չի սահմանվում, հետևաբար, պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնել՝ «Էկոլոգիա Վ. Կ. Հ.» ՍՊԸ ընկերությանը՝ 3,300,000 /երեք միլիոն երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի չափով, ներառյալ ԱԱՀ-ն:

Ընդունվել է որոշում՝

Կողմ՝ 3

Դեմ՝ 0

Ստորագրություններ.

Գնահատող հանձնաժողովի Նախագահ՝ _______ Ա. Ղազազյան

Անդամներ՝ _______ Ն. Ալեքսանյան

_______ Ն. Հախվերդյան

Քարտուղար՝ _______ Ա. Վիրաբյան